ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, 011301.01.6
Որակավորումը	Մանկավարժության բակալավր
Ֆակուլտետ	Հասարակական գիտությունների
Ուսուցման ձև	առկա 4-րդ կուրս 1-ին, 2-րդ կիսամյակ

Հաստատված է

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստում

(արձ. թիվ 1, 28.08.2023 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Լ. Բաղդասարյան

Հաստատված է

Հասարակական գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. թիվ 1, 11.09.2023 թ.)

ֆակուլտետի դեկան՝ Հ. Պապոյան

Վանաձոր

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Պրակտիկայի նպատակը և խնդիրները

2. Պրակտիկայի տեղը կրթական ծրագրի կառուցվածքում

3. Պրակտիկայի արդյունքները

4. Պրակտիկայի ռեսուրսային ապահովումը

5. Պրակտիկայի ընթացակարգը

5.1. Պրակտիկայի ղեկավարների պարտականությունները, գործառույթների նկարագրությունը (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի)

5.2. Պրակտիկայի գնահատումը

1. Պրակտիկայի նպատակը

Ապագա ուսուցչի պրակտիկ գործունեության կազմակերպման մասնագիտական կարողությունների, հմտությունների ձևավորում և զարգացում:

Պրակտիկայի խնդիրները

- ձևավորել մասնագիտական գործունեության նկատմամբ ստեղծագործական և հետազոտական մոտեցման պահանջմունք,
- ձևավորել ապագա ուսուցչի դաստիարակչական կարողություններն ու հմտությունները,
- ձևավորել արտալսարանային և արտադպրոցական աշխատանքներ կազմակերպելու կարողություններ և հմտություններ,
- ձևավորել մանկավարժական գործընթացը վերլուծելու և գնահատելու կարողություններ,
- ուսանողներին հաղորդակից դարձնել գիտության, մշակույթի նվաճումներին, օգնել ճիշտ կողմնորոշվելու հասարակական կյանքի գիտական ղեկավարման տեսության և պրակտիկայի հարցերում,
- ձևավորել ղեկավարման, աշխատանքային և դասարանային կոլեկտիվի կազմակերպչի, դաստիարակողի ունակություններ և հմտություններ,
- ծանոթացնել դասարանային խմբերի հետ աշխատանքների սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին,
- ուսանողներին ծանոթացնել հոգեբանական գիտելիքների կիրառման առանձնահատկություններին:

2. Պրակտիկայի տեղը կրթական ծրագրի կառուցվածքում

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, 011301.01.6 որակավորման (աստիճան՝ «Մանկավարժության բակալավր») ուսումնական պրակտիկան կազմում է մասնագիտական կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Պրակտիկայի ընթացքում ուսանողին հնարավորություն է ընձեռնվում իրական դաշտում ներդնելու ուսումնառության ընթացքում «Մանկավարժություն (Դպրոցի կառավարում)», «Հոգեբանամանկավարժական մարդաբանություն», «Մանկավարժական ժամանակակից տեսություններ», «Ընտանիքի հոգեբանություն» առարկաների շրջանակներում ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները:

3. Պրակտիկայի արդյունքները

Կոմպետենցիաների ցանկ, որոնք «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կբերի ուսումնական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 011301.01.6 «Տարրական մանկավարժություն» ԿԾ-ով

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Նկարագրել մանկավարժի իմիջը, դերերը, գործառույթները:

Ներկայացնել անձի անհատական և տարիքային զարգացման օրինաչափությունները:

Ներկայացնել առարկայական հասկացությունները, մեթոդները, սկզբունքները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Մանկավարժական խնդիրների լուծմանը նպաստող մեթոդների ընտրության, կիրարկման և արդյունքների գնահատման կարողություն

Մանկավարժական գործունեության կազմակերպման և իրականացման կարողություն

Առարկայական գործիքակազմի ընտրություն և իրականացում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Տիրապետել ինտելեկտուալ, բարոյական, կոմունիկատիվ և կազմակերպչական կարողություններին

Ունենալ սոցիալական, մշակութային, քաղաքացիական պատասխանատվություն

4. Պրակտիկայի ռեսուրսային ապահովումը

Պրակտիկայի ընթացքում ուսանողները պետք է ապահովված լինեն հիմնական և լրացուցիչ գրականությամբ, որը կօգնի նրանց ներկայացնել հաշվետվություն պրակտիկայի վերաբերյալ:

1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: Երևան, 2003

2. Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն: Ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան, 2002

3. Дидактика средней школы. Некоторые проблемы соврем. дидактики. Учеб. Пособие для студентов пед. ин-тов. Под ред. М.А. Данилова и М.Н. Скаткина. М., «Просвещение», 1975

Պրակտիկայի համար անհրաժեշտ տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցի ինտերնետ ռեսուրսներ.

http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf

5. Պրակտիկայի ընթացակարգը

	Բովանդակություն
Շաբաթ 1	Ծանոթություն դպրոցին, դասարանին, ուսուցչական կոլեկտիվին: Կատարել դասալսումներ համապատասխան դասարաններում:
Շաբաթ 2	Վարել դասեր, վերլուծել, քննարկել և գնահատել:
Շաբաթ 3	Կազմակերպել արտադասարանային, արտադպրոցական աշխատանքներ, իրականացնել խորհրդատվական-դաստիարակչական աշխատանքներ, կատարել հոգեբանական հետազոտություն:
Շաբաթ 4	Կազմակերպել դաստիարակչական միջոցառում: Կատարել իրականացված աշխատանքների ամփոփում:

5.1. Պրակտիկայի ղեկավարների պարտականությունները, գործառույթների նկարագրությունը (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի)

Պրակտիկայի ղեկավարները

- ապահովում է պրակտիկայի անցկացման պայմանները,
- անցկացնում է խորհրդատվություն,
- կազմակերպում է ուսանողների աշխատանքը,
- վերահսկում է ուսանողների աշխատանքը, ձեռնարկում է միջոցներ՝ պրակտիկայի կազմակերպման թերությունները վերացնելու ուղղությամբ
- ղեկավարում է պրակտիկայի արդյունքների ամփոփումը,
- գնահատում է ուսանող-պրակտիկանտի աշխատանքը:

Դասղեկ

- ծանոթացնում է ուսանողներին դասարանի աշակերտների հետ, նրանց առաջադիմությանը, դասարանի դաստիարակչական պլաններին և հիմնախնդրին,
- անց է կացնում արտադասարանային դաստիարակչական աշխատանք աշակերտների հետ,
- օգնում է ուսանողներին՝ նշելու դաստիարակչական խնդիրները, կազմելու դաստիարակչական աշխատանքի պլանները, հաստատում և վերահսկում է պլանի կատարումը,
- մասնակցում է ուսանողների ինքնուրույն կազմակերպված արտադասարանական պարապմունքներին և դրանց քննարկմանը,
- բնութագրում է ուսանողներին որպես դասղեկական աշխատանքներ կատարողների:

Պրակտիկանտների պարտականություններն ու իրավունքները.

- Պրակտիկան անցկացնում է օրական առնվազն 6 ժամ,
- պահպանում է աշխատանքային կարգապահությունը,
- հետևում է բոլոր նախանշված միջոցառումներին և խորհրդատվություններին,
- մշակում է պրակտիկայի անհատական պլանը, աշխատում է համաձայն հաստատված պլանի, ներկայացնում է հաշվետվություն (գրավոր և բանավոր),
- ներկայացնում է իր առաջարկները՝ պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը.

- Պրակտիկայի օրագիր
- Մեկ դասի պլան կոնսպեկտ
- Ուսանողի՝ որպես դասղեկի օգնականի անցկացրած դաստիարակչական մեկ միջոցառման պլան
- Հաշվետվություն իր կատարած աշխատանքների վերաբերյալ (լրացվում է օրագրի համապատասխան էջում)

5.2 Պրակտիկայի գնահատումը

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները (գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում
1. Հաճախելիություն	0 - 10	
2. Առարկայական իմացություն	0 - 20	
3. Վարած դասերի վերլուծություն • Մեթոդական գործիքակազմի ընտրության և կիրառման կարողություն, ժամանակակից տեխնոլգիաների կիրառում • դասի պլանավորման կարողություն • դասաժամանակի ճիշտ օգտագործում • գնահատման կարողություն	 0 - 7 0 - 4 0 - 3 0 - 6	
4. Մանկավարժական աշխատանք 1. մանկավարժական վարպետություն 2. մանկավարժական մշակույթ 3. արտադասարանային աշխատանքի կազմակերպման կարողություն, դասղեկի ժամի անցկացում	 0 - 5 0 - 2 0 - 8	
5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք • դասարանի կոլեկտիվի կամ աշակերտի հոգեբանական բնութագրի կազմում • դասի հոգեբանամանկավարժական վերլուծության անցկացում • արտադասարանային միջոցառման հոգեբանական հիմնավորում	 0 - 5 0 - 5 0 - 5	
Պաշտպանություն	0 - 20	
Ընդհանուր միավորը	100	